

ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ
 № 18 (38)
 ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԿՈՒՆԷՆ Է

Թաւրիզում	20 դրան
Գաւառներում	25 դրան
ԱՐՏԱՍԱՀԱՆ	
Ռուսաստան	5 ռբ.
Թուրքիա	50 դրան
Եւրոպա	14 ֆրանկ
Ամերիկա	2,50 մոլ.

Յայտարարութիւններ վճար
 Առաջին երեսում յայտարար 20 անգ.
 Զարգաց 10 .
 ԱՌԱՆՁԻՆ. ՀԱՄԱՐԸ 6 ԵԱՀԻ

Խմբագրութեան հասցեն՝ Թաւրիզ
 ՄԻՏԿ-ի Խմբագրութեան կամ Tauris Perse
 Rédaction du journal arménien „MITK“
 = Adresse télégraphique-Tauris „MITK“ =

ՄԻՏԿ

ՀԱՐԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ԳՐԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ

اداره روزنامه میطق

MITK

Propriétaire & Editeur en chef
Al. Der-Vartanian

TERMS OF SUBSCRIPTION
 for a year payable in advance. 20 kran.
 Foreign Dollars 2. 50

RATES OF ADVERTISEMENTS:
 one printing line on the 1-st page 10 cen.
 „ „ „ „ 4-th „ 5 „
 15% discount for annual subscrip-
 tion paid in advance. Address
 Rédaction „MITK“
 Tabriz, Persia

Գ. ՏԱՐԻ № 18 (38) — ԹԱՐԻԶ, ՉԱՐՍԹ 17 ՄԱՅԻՍ 1914 Թ. Tauris, Samedi le 30 Mai 1914 № 18 (38) Vol. III

Русское Товарищество
АНОНИМЪ
Спирто Ректификационный
Коньячный заводы
 и склады ликоровъ виноградныхъ
 и столовыхъ винъ, спирта и натураль-
 ныхъ коньяковъ.
Урмия
 Со справками обратиться въ контору
 3 — 1 Братья Вудагянъ.

ԱՐԱՄԵԱՆ ԴՊՐՈՑԻ ՊԵՏԱԿԱՆ ԵՊԱՍՏՆԵՐԸ ԴԱԴԱՐԱՆ

Մեր թերթի երեքամսյա հրատա-
 րակութեան մօտիկ ծանօթ անձինք
 պէտք է իմանան, թէ որքան մենք
 աշխատել ենք իրապէս պահել ընթերցող
 դասին բոլոր այն դիմումներին, որոնք
 նպատակ ունէին վերականգնել Ռուս և
 Պարսիկ կառավարութեանց Որսման
 դպրոցին տալիք նպաստները, դադա-
 րեցրած 10 տարիներից ի վեր:

Երկու պատմութեանց զաղրեցրած
 նպատակների վերստացումը մենք պար-
 տական ենք նորին սրբազնութիւն Գարա-
 պետ Եպիսկոպոս շանքերին, Գարապետ
 սրբազանն էր, որ իւր յաճախակի դի-
 մումներով ազնիւ պ. Միլլերին և կըր-
 թասէր Մօսկէթ-էս-Սալթանին միջնոր-
 դութեան գրդեց իրենց կառավարութե-
 անց առջև, որոնք 1909-10 ուսումնա-
 կան տարիներին հասցրին վաղուց ընդ-
 հատուած նպաստները:

Մինչդեռ յոյս կար, որ այնուհետև
 անխափան կշարունակէին ստացուել
 այդ նպաստները, երբ էլի յառաջացան
 դժուարութիւններ և ընդհատումներ:

Նախորդ և ներկայ հոգաբարձու-
 թեանց և պ. Զ. Նազարեթեանի էլ
 պարբերաբար դիմումները պ. Միլլեր-
 ին, որ շուտ մեկնեց Թաւրիզից, և նորա
 պ. յաջորդին, այլ ևս նպատակի չհասան:

Ներկայ տարում հոգաբարձութեան
 մի դիմումին ի պատասխան պ. Պրի-
 ապրաթենսկին հաճեց ասել, որ Ռուսական
 Գայսերական կառավարութեան 550
 ռուբլու տարեկան նպաստներն այլ ևս
 դադարեցուած են, օտակայի հոգաբար-
 ձութիւնը շարունակելու է յարուցել
 միջնորդութիւններ այս նպատակ վերա-
 կանգնման համար:

Նման ընդհատումներ ունեցան կըր-
 կին և պարսից պետական նպաստները:
 Հարկ եղաւ յամառ աշխատանք:
 Այս ինքնուր բնահատիկի աջակցութիւն
 ցոյց տուեց Սալթան խան Ելիազար-
 անը, որ բաւական աշխատել էր այս
 հարցի համար և Մօսկէթ-էս-Սալթանի
 օրով: Իրօք մեծ ջանք թափուեցաւ այս
 առթիւ պ. Ա. Տ. Գարապետեանի և մեր
 կողմից, մինչև որ վերստացուեց թեան-
 կուզիլ տարուայ նպաստը:

Նորից ընդհատումներ և դադարեց-
 ումներ առաջ եկան. Ներկայ հոգաբար-
 ձութիւնը, ի գէմս իւր նախագահի-Պ. Վ.
 Գէորգեանի, բազմաթիւ հեռագիրներով
 թէհրան՝ պետական գանձապահ պ. Մոռ-
 նարից խնդրեց վերստացումը Սրչկան-
 և Ուզ տարիների նպաստների: Նպատա-
 ւոր միջնորդութիւն այս մասին քանիցս
 յանձն առին և պ. պ. Ռանսկէն ու Մոլի-
 տօրը:

Սակայն, չնայած հոգաբարձութեան
 այսքան յաճախակի և հետեողական
 դիմումներին, այս անգամ շարաթ պետա-
 կան ընդհանգանապահից նամակստացուեց,
 գուժող՝ որ Արամեան դպրոցի պետա-
 կան նպաստ 250 թումանը դադարեց-
 ում է, դպրոցի հարուստ և «պահանջ»
 լինելու պատճառով:

Ներկայ հոգաբարձութիւնը նկատե-
 լով որ բոլոր իր օրինակուն դիմումները
 նպատակի չհասան, պատրաստուած է
 մի պատճառաբանելով խնդրագրով դի-
 մել պետական խնամակալ Նասր-էլ-Մօլ-
 քին, կարգադրելու, որ յաւերճայիշա-
 տակ և լուսահոգի արքայ Նասր-էլ-գի-
 նի՝ պատմական հրովարտակը ճանաչուի
 իր ոյժի մէջ և չդադարի նպաստի վճարը:

Ա. Տ. Վ.

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻՑ ՍՏԱՅՈՒԱԾ ԼՈՒՐԻՐ

Սարիում մէջլիսի ընտրութեանց գոր-
 ծը յաջող առաջ չի գնում: Դատարը
 մուսուլմանի միջոցով ազդարարել է ժողո-
 վրդին. թէ ով որ չգալ և ընտրութեան
 թերթ չտատայ իր ստ պէտք է պատժուի:

Գոյիպկանում և Խունսարում մէջ-
 լիսի ընտրութիւնները սկսուել էին, բայց
 երբ յուր է ստացուած, թէ դատարը
 փոխուած է, այդ պատճառաւ ընտրու-
 թիւնները յետաձգուած են:

Թէև ներքին գործոց նախարարը մի
 քանի անգամներ Խար Վարամին հեռագրել
 է որպէսզի մէջլիսի ընտրութիւններն ըս-
 կըսուին, բայց ընտրական գործը շատ դան-
 դաղ է առաջ գնում: Նոյն դրութիւնն
 է և Ղուսում, Համաքանում և Սպահա-
 նում:

Համաձայն խնամակալի հրամանի,
 հինգշաբթի օրը Նախարարութեանց
 ժողովները պէտք է նորին կայսերական մի-
 ծութիւն Ահմադ Շահի ներկայութեամբ
 կայանան, որպէս զի նորին. Գ. Մ. տեղե-
 կանայ երկրի գործերի հետ:

Ղազմէ-Վօջը, որ Լօրիստանի
 կոնսուլում մեծ քաջութիւններ է արել,
 պարգևատրուել է ակնակուռ թրով:

Հաջի Սալար-Համայունը, որ նշանակ-
 ուել էր Թուրքիայի դատաւոր, անդ է հա-
 սել:

Սպահանի ժողովուրդը հացի թան-
 զութեան պատճառաւ բուարարուելու ոչ
 մի միջոց չգտնելով, ապստամբել է Անգլ-
 իական հեռագրատուներ և Նոր-Ջուղայի
 Նոր-Ջուղայի առաջ. փոխանորդ Զ. Եգեթի
 վարդապետը նրանց լաւ ընդունելութիւն-
 ներ է տուած: Թանգութիւնը կառուածա-
 տէրերի ցոյքն ամբարիւղաց է առաջ
 եկել:

Քիւմանշահից յայտնուած են, որ Արա-
 խանի և Սուլէյման խան Սարգար-Նօսրաթ
 Քալհօրի մարդկանց մէջ Հարուն-Աբաղում
 կռիւ է պատահել, առայժմ յայտնի չէ թէ
 ո՞ր կողմն է յաղթող հանդիսացել:

Լուրեր էին տարածուել, որ Քախթի-
 արի խանը Ահմադ Շահի թագադրու-
 թեանը համակր չէն և «պայման» լրագր-
 րեն այդ առթիւ էլ յուր էր տպագրել: Ա-
 միր-Սօբարաբը, Սարգար Բըհադուրը և
 Սարգար-Աղաջանը՝ հեռագրով այդ լուրը

հերքել և իրենց խոնարհ հպատակութիւնն
 են յայտնել Շահին և Պաշտօնադրական
 կառավարութեան:

Խնամակալը նախօրոք յուր առջով
 Քէհրարանի փոխի վարչութեան, գնա-
 ցել է վարչարանը և վարչութեան կապա-
 կերպութեան լատուկ շնորհակալութիւն
 է յայտնել, նա մանաւանդ Եփրայիմ կա-
 ժակերպիչներին:

Եւրոպայում Արապտական հարցը
 խիստ բնութեան է առնուած:

Հիտաբբէր ընտրութիւն: Մարտի-
 դարանի դատաւոր Ռուքնէ-Գոյլէն 3 հո-
 գի գուտ պատգամաւորների ընտրու-
 ած ժախսերի համար 200 թուման է պահան-
 ջել, մինչդեռ Քէհրարանի դատաւոր Ղա-
 վամէ-Գոյլէն 3 հոգի Քէհրարանի շրջկայ-
 քի պատգամաւորների ընտրութեանց
 համար կառավարութիւնից 3200 թու-
 ման է պահանջել: Ըստ գարմա-
 նայի է, որ ներքին գործոց նախարարը
 ժողովրդից կոպէկներով հաւաքուած դը-
 րամները այս եղանակով ծախսուելու
 դուռնուած է:

Ջանջանում ևս Անջուման նա պար-
 է ընտրուել ընտրութեանց համար:

Թէհրան Եւստովն

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹԱՐԻԶԻ ՊԱՐՍԻԿ ԹԵՐԹԸ
ՀԱՅՈՑ ՄԱՍԻՆ

Թաւրիզում մի քանի տներից է
 վեր հրատարակուած է Եմարիէի Խոյմա-
 անունով լեռնադիմական մի օրգան: Նա
 չի քաջուել քաջաբար տնուանել հայերին
 և մեղադրել նրանց այն բանում, որ նը-
 րանք Խոյմի օրէնքը բանգում են:
 Թերթի հայ հիւրանայների մասին «ստե-
 ների հետ, լոկ անբարոյականացման կող-
 մից, համաձայն ենք, ապա ինչ վերաբե-
 րում է պետական հայ պաշտօնեաների
 մասին նրա արած մէկ կարգ շարամու-
 թեանց, մենք գրուեց կատառախանք
 յաջորդել:

Տալիս ենք ստորև օժտրուելի Խոյմ-
 միս մեր մասին գրածի ամբողջ թարգմա-
 նութիւնը, կատարուած լատին պարսկա-
 արաբագէտ պ. Աբր. Փանուէրեանի ձեռ-
 քով:

Նա այն հայ կոմպոզիտորն էր, որ առաջին անգամ ևրոսական նոտաներով ձայնագրելով հայկական բազմաթիւ երգեր ու պարեր, նրանց հայ երաժշտասէր հասարակութեանը մոտուցեց և ևրոսական երաժշտական կրթութիւնը ստացած հայ երաժշտիկն ու կրթիչը Բէթհովէնի, Մոպէսի, Վագների ու Լիստի փառահեղ երկերի կշիռն իր ազգային ու արեւելեան մէլոդիաների ժողովածուներն ունեցաւ։

Իր անհատական աւելի բարձրագոյն գիտն էր, որ XXV տարի շարունակ, հեռու ու մեկուսացած, անխնայ ու անվատ ուսումնասիրեց հայկական ու սլաւոնական գորգիկ մեղեդիները, տուեց նրանց ևրոսական փայլ ու հարմոնիա և մի պէտեւ գիկ ճշտութեամբ ձայնագրելով այդ եղանակները, մեծ տաղանդով գտաւ արեւելեան երաժշտութեան համապատասխան և բնորոշ հարմոնիզացիա՝ ևրոսական մուգիկայի տէրօրայով և հարմարեցնելով։

Սակայն չենք կարող արտօնել կանգ չառնել այն խոշոր հանգամանքի վրայ, որը անսահման կերպով բարձրացրեց և արեւելեան եղանակների առաջին մոլիստորոյն և նրա սկզբ գործը։

Լիստ վճիռ, յստակ ու մաքուր էր այն աղբիւրը, որից վերցնում էր ծիւղաբաններ իր երաժշտական երկերը։ Իսկ այդ աղբիւրը արեւելեան եղանակների անզուգական երաժշտագիտն էր, հանգուցեալ Ազմայ աղա Մելիք-Աղամալեանը, Երևանի այդ հռչակաւոր ընտանիքի տաղանդաւոր զաւակը, մեծ հայրենասէր Թաշախան Երաժշտիկ շնորհալի աշակերտը, որի երաժշտական գիտութիւնն ու հռչակը անքննելի մեծ էին, որ Արսկաստան գնացող և այնտեղից վերադարձող ոչ մի արեւելեան երաժշտագետ չէր կարող անցնել առանց նրան այցելելու, առանց լսելու նրա հանրակարար և խորիմաստ կարծիքը իր ներառած փորձաքննման մօլ գամաթների մասին։

Ահա այս անզուգական անձնաւորութիւն էր, որ ամենից առաջ սէր ունէր չեց երաժշտագետի մէջ գէպի արեւելեան մուղամներն ու մուղամները և որից լիւրջ օգուտեց տաղանդաւոր լուսնեարը, նրա քննադէպ կեանքի ընթացքում։ Ու շնորհիւ այս բարեբաղդ հանգամանքի նա ձայնագրեց ու հրատարակեց իր գոյութիւն Երաժշտիկ-Մելիքը, խորիմաստ ու անզուգական Երաժշտիկ-Մելիքը, անձնական «Չար գեղահր», չքննելի «Շահնաշահ», «Հէյրաթի», «Շուրաբի» և այլն և այլն, որոնք իրենց բովանդակութեամբ թէև պարսկական կրթութիւն երկեր են, բայց միևնույն ժամանակ նրանք բոլոր արեւելեան ազգերին, որոնց թուում և մեզ հայերին համար, այնքան ընտանի են ու հարազատ։

Եւ ահա այսօր, երբ լրացել է արդէն 25 տարի այն օրից, երբ առաջին անգամ հրատարակուեցին տաղանդաւոր երաժշտագետի առաջին երկերը, մենք, նրա հայրենակիցներս, գոհունակութեան հպարտութեան զգացմունքներով հրաւեր ենք կարդում հայ և օտար հասարակութիւններին և բոլոր նրանց, որոնց համար թանկ է աղբիւրն երաժշտութեան վերաճումը թիւնն ու զարգացումը մասնակցել երաժշտագետի լուսնեարային հանգիսին, և աղբիւրով միմիային իր բարոյական քաջութիւններով, ու լարգանքը մոտուցանել նրան, որը 24 տարի շարունակ լուրջ ու մենակ, հեռու ամեն անհասկացողից ու խրախուսանքից, լի իր սեփական ջանքերով ու միջոցներով գրել ու հրատարակել լիստեից աւելի երաժշտական երկեր, որոնք այսօր հիացմունք պատճառելով օտարներին, մտել են շատ նշանաւոր երաժշտագետի Բէթհովէնի մէջ և հայ

երաժշտական աշխարհի պարծանքն են կազմում ամենայն իրաւամբ։

Նորհաւորանքները, ուղերձներն ու նուէրները պէտք է ուղարկել հետեւեալ հասցեով. Աղէքսանդրապոլ՝ Քաղաքագրութիւն 4. Կոմսարականի, Александрополь, Городекому Головъ Герасиму Петропичу Камсараканъ.

Նախագահ Զօրեյանական Թանձնա-ժողովի Աղէքսանդրապոլի Քաղաքագրութիւն 4. ԿԱՄՍԱՐԱԿԱՆ

Օրինակաւոր Աղբիւրներն. Սիրանուշ Եր-Միւսեան. Յակովբ քահ. Խաչվանքեան. Բժ. Նիկ. Եր-Խաչվանքեան. Արմենակ Բարախան. Ա. Եր-Պողոսեան. Գեղամ - Արմէն. Յովսէփ Միրզաբեկ. Պարոյր Բաբայեան.

Անդամ քարտուղար՝ Պետրոս Մոմոնեան.

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

14 Ապրիլ Ռաշա
ԴՊՐՈՑԱԿԱՆ ԿԵԱՆՔԻՑ
Եւանելի անցեալը եւ անմիջապէս
նկարագրում
(Սեփ. Թղթակցից)

Եթէ հայ մամուլը և նրա աշխատակիցները մեծաւ մասամբ և լաճախ խոսում են դպրոցների մասին, այդ շատ բնական և հասկանալի պէտք է համարել։

Պետական ազգ չենք։ Չունենք խոշոր և կեանքի ու մահու հարցեր շոշափող այլ կենսական խնդիրներ։ Մեր հասարակական խնդիրը դպրոցական կեանքից այն կողմ չի տեսնուում։ Դա է միակ առանցքը, որի շուրջը պտտում է մեր ազգային-հասարակական կեանքը։ Ուստի որքան բարեկարգ վիճակի մէջ է հայ դպրոցը, այնքան միջնորդական է և մեր կրթական դրոճը և ապագան։ Որքան խառնակ է նրա վիճակը, այնքան պատահական և աննպատակ է նրա կեանքն ու պատրաստած սերունդը։ Առանց դպրոցի և այն էլ, կանոնաւոր հայ դպրոցի, մենք հայերս ոչ կենք և ոչ էլ ապագայ ունենք։

Արդ, դառնանք մեր տեղական դպրոցին և տեսնենք ինչ է եղել նա տնտեսութեամբ և ինչ է նա այժմ։

Մօտ 15 տարի առաջ մեր դպրոցը եղել է սրտացու, զուտ կրթական գործով սղեւորուած և անկուսակցական ու ժողովրդական մարդոց ձեռքը։

Այդ մարդիկ, իրաւ է, չեն ունեցել մեծ ուսում, ոչ էլ ծանօթ են եղել մանկավարժական գիտութեան, կամ նրա այս ու այն սիւստեմին, սակայն ունեցել են այն անխախտ գիտակցութիւնը, թէ ուսումը պէտք է իրենց որոց մտքի ու հոգւոյ լուսաւորութեան համար և չեն խնայել ընդհանր, որ ապագայ սերունդը իրենց պէտքերով կրկն ու ուսումնում չմտնէ։

Նրանք հարկեր են ուսուցիչներ, որոնք նոյնպէս եղել են անկուսակցական և իղէալական մարդիկ։ Նրանց փառքները եղել է լոկ հայ մանուկի մտաւոր և հոգեկան ու բարոյական զարգացումը և ապագայ ազնիւ հայ տարր պատրաստելը։

Այնչ խոստովութիւն, բռնութիւն և

մեծ ու փոքր շէֆեր և քաջքաւներ այդ, իրօք, ծաղկման շրջանում չեն եղել։ Հոգաբարձու, ուսուցիչ և ժողովուրդ մի մարմին ու մի հոգի եղած աշխատել են աշխարհի պէս պահել դրաւը և պահել այդ իր ժողովրդական մի հիմնարկութիւն։

Աւալ, անցան Եր-Միւսեանները, եկան նոր մարդիկ, նոր հոսանքներ։ Փթած է, ասացին, հին ձևը, փթած են նաև հին ուղղի մարդիկ։ Նոր մարդիկ, գեմօկրատական սկզբունքներ և նոր հոգիներ, ասացին այդ նորերը։

Գեղեցիկ թակարդ միամիտներ որսալու համար։

Նորերի այդ փառքն խոսքերի տակ թաղուած էին լիտին մտքեր։ Դեմօկրատական անուան յերթոյ գործուում էր սոսկալի բռնապետական և օլիգարխիական մի սկզբունք, մի սիւստեմ։

Եւ այս շարքը ծնեց թալիֆան, Դաշնակցութիւնը, որ մօտ 10 տարի առաջ ոտք կոխեց այստեղ և պապոււն խոսքերով կախարդեց գիւրաւ լափշտակողներին, որոնք բարեմտօրէն քուէ տուին, ճամպոյ բացին այդ գառնազգեստ գայլերին գէպի մեր միակ փառքաւոր հիմնարկութիւնը—գէպի դպրոցը։

Ազնիւ խոսքերով, բայց ճիգաւթական գործելակերպով մեր մէջ մտած այդ թալիֆական մարդիկ տարիներ շարունակ սարսափի ու բռնութեան տակ լուսնեար հասարակութեան, ժողովրդին, որի անուինք նրա Լիւրճը են թակել խոսքով, իսկ իրականութեան մէջ նրան պահել են իր կիծան կով, անկամ մեքենայ և հլու կամակաւոր։

Այդ բռնութիւնը իր գագաթնակէտին հասաւ բաղդի խաղով՝ անխառնութիւնից մեծ դիրքի հասած և գիտաւոր աստղի նման հարկոյնից արագ անհետացող Եփրեմի օրով, որով թալիֆականները հպարտացած՝ իրենց տէր ու տնօրէն զգալով ինչպէս ամեն տեղ, նոյնպէս և Ռաշտում՝ արին ամեն ինչ։ Մարդկանց սրի երկու կողմն էլ կտրում էր։ Ընդդիմախօսին ցուց էին տալիս մազէր ու բռնուցք։

Ազնիւ մարդիկ հեռացուած, ժողովրդական անշնք հալածուած, դպրոցը իրեւ միջոց ու թալիֆան հասնէ ազգն ու մանուկ սերունդը ալիսարող մի վատ նպատակի և համբարական բռնութեան։

Գիտութիւնը, մարդկութիւնը ու բարոյականութիւնը ծաղկում էին դպրոցում, ուր միայն անդէպ, իրենց կուսակցական տանգիտադրելու ու ժողով մարտաւանդած մեծամիտ ու համբալ մարդիկ թափուել էին սրպէս թէ ուսուցչի սրբազան միսախալով։

Մատաղ մաքրահոգի և ամեն ձևի համար դիւրաւ ծուռող, բարոյականացնող սկզբունքների ծաղաւ մեր մանուկ սերնդի կրթութեան գործը լանձնուած էր ազատ սիրով լիզայականների, թեւրտների և ապօրէն կենսականութիւններով ապրողների ձեռքը։

Բնական չէ, որ այս դէպքում հասարակութիւնը սառչէր իր երէկի գուրգուրած դպրոցից և գործն էլ ընկներ իր բարձրութիւնից։ Եղած աշակերտութիւնը նոյնպէս անդէպ, սրպէս իր վարժապետները, անպաշար՝ սրպէս իր ուսուցիչները և անզարգացած ու մեծամիտ՝ որպէս իր ֆրանսի և լոկ մարտական քալուածքով հպարտ՝ իր գոտաւորները։

Տխուր երեւութիւն լայն բացել տուեց հասարակութեան աչքը։ Նա բոլորտի ենթարկեց իր գլխին փարձանք դարձած դպրոցն ու համբալ ուսուցիչներին։ Ուստի և վճռեց չտալ առաքել։

Վճռականութիւնը ցնցեց տիրաւոր գործող նախացեալ տարուայ խալ ու ապկար հոգաբարձութեան։

Մի քանի ամիս մի կերպ ընդ քաջընդունեց և պարաքի սէջ խրաւուրց լետոյ—որովհետեւ ժողովուրդը իրենցից երես էր դարձրել—չնայած որ իրենց ժամանակը չէր լրացել, լայնարակցին որ հրաժարուում են հոգաբարձութիւնից։

Հրաժարման պատճառը միմիայն ժողովուրդի տուրքի չվճարելն էր։ Եթե մօկրատները, ժողովրդի անունից ականջ տանողները, բայց ժողովրդին իբրեւ գըրաւուած կիւն նոյն ստիկացուած, բայց արդէն անհամարձակ կերպով իր իրաւունքների մասին մարտնչող ժողովրդի նպաստից։

Որքան և կրկնուեցին լայնարակութիւնները, այնու ամենայնիւ քայքայական հոգաբարձութիւնից ու դպրոցից զգուած ժողովուրդը ժողովի չեկաւ։

Դիականացած, կուչ եկած հոգաբարձութիւնը ընտրութեան համար որոշեց զիմել ծխական քահանային, սրին և լանձնուեց արխիւը։

Քահանայի 4 անգամուայ հրաւերից ետոյ հաւաքում են նայն իրենց մարդիկ և հազիւ մի քանի նսրերը, այն էլ քահանայի լատուկ խնդրով կեւած։

Հասարակութեան 1/3 մասը չկազմող թալիֆականները ժողովը միևնաւոր համարելով ընտրում են նոր հոգաբարձութեանը։ Սակայն նկատելով իրենց անուսուարկ լինելը, փոխթեքալի համար ընտրում են նաև 3 չեզոք և երկու հին թալիֆական անձանց։ Ժողովը ընտրեց 3 չեզոքներին կազմի մէջ տեսնելով՝ վստահանում է փող տալ։

Չեզոքները խրտուսներին տեղիք չը տալու համար ժողովը համաձայնում են թալիֆայի մարմնացումն նախկին ուսուցչական խումբը պահել, միայն Վճիւր լրազրի խմբագրութեան միջոցով իբրեւ աւագ ուսուցիչ՝ հրաւիրում են Ընտրուած թեմական դպրոցն ու Գէորգեան ձեմարանի լսարաններն աւարտած պ. Սահակ Եր Դուկասեանին։

Սակայն թալիֆական հոգաբարձութիւնն ու ամսկավարժական խումբը նոր աւագին չեն ընդունում և վերստին ընտրում են՝ այդ պաշտօնից պաշտօնալիս արձակուած հին ուսուցչից պ. Մելքոնեանին։

Չեզոքները թալիֆական երկու հոգաբարձութեանից այս խաղը տանելուց լետոյ այլ ևս վրդով ու մէկիկ մէկիկ հիւստում են պաշտօնից, նորոնոր խորագրաւ թիւններ տեսնել ու տանել չկարողանալով խալ ևս։

Նպատակն իրադրութեամբ էր։ Թալիֆայի ուղածն էլ հէնց այդ էր։ Մէջ բերել ժողովուրդի մարդոց, նրանց անուով ու վարկով ապահովել դպրոցն ու բնութեն, ապա վունդել նրանց կազմից, պահել իրենց ձեռքին դպրոցը և բերել որջանցել այնտեղ իրենց տնկարագրի ու անսկզբունք թերութիւն մարդոց։

Այս ճիգաւթական գործելակերպը սակայն աննկատ չի մնում։ Նոր-նոր արթնացող հասարակութեան կողմից։

Երբ երեք հրաժարականների տեղ հրաւեր է լինում, որ կանտիկամ չէ-գօքները գան, վերջինները միմիայն են, չկամենալով գործիք գաւաւի ժողովի թալիֆայի ձեռքին։ Ստիպուած թալիֆական երկու հոգաբարձութեանը իրար վրայ երկու անգամ լայնարակութիւններ են տալիս, որ հասարակութիւնը գալ և հրաժարականների

տեղ նորերն ընտրելու Գալիս են միայն մարզումս փոքր թվով թափափանցող, որոնք շատ չնչին թիվ են կազմում:

Մարդիկ օրէնք ու կանոն էլ գիտեն, Գիտեն որ իրենցից ամենքը զգուշ են, որ ոչ ոք ժողովի չի գալ: Իսկ երբորդ ժողովին որքան էլ գան, ըստ օրինի, զբաղանք ընտրութիւնը կրկին օրինաւոր և կընտրեն, անշուշտ, իրենց մարդոց: Ելինք է պէտք ժողովուրդը: Չէ որ արդէն փողը յիմա՞ր և գիւրհատ ալ ժողովուրդից հանել և գրստել են արդէն:

Ներսիս

28 Ապրիլ

ԼՐԱՐԵՐ ՈՒՐՄԻՒ

(Սեփ. թղթակցից)

Ձեր առաջնորդներն ու յօգուածները, երեւի, ազգել են ի վերջոյ բազմապատիկ պաշտօններով ծանրաբեռնուած և անհանգիստ լինելով հարուստ սինդակատներով վրայ, որ բարի են եղել ամսական 30 րբ. աղքատ ողորմութիւն տալ մեր հովիւ հ. Լազարեանին, որ սովորէ չմեռնելու համար գլուխ պահէ ալ տեղ:

Պ. Նիկողայ Լազարեանը իր մօր լիշատակը յարգած լինելու համար նուիրեց 300 թմ. նորակառոյց դպրոցին և 100 թմ. էլ թրքախօս հայերի մի ուսուցչի: Սպասելի է, որ չմեռնայ մի պատուաւոր գումար էլ նուրի Ուրմի բարձրացման աշխատանքները ու նախանշանները լինեն:

Վերջապէս դպրոցի շինութեան լանձնաժողովը աշխատում է հողը գնել, միւս կողմից հանգանակութիւնը շարունակել:

Անցեալները թուրք կողակները Ռուսաց միսթայի մի ծառայողի շատ ծանր կերպով ծեծել էին և վերջն էլ ուզել գաշտնով սպանել: Վերադառնալով է անմեղ ձին: Ահա հասարակ չի երևում Գլուխին: Ժամանակաւ ուսուցչատեղերի կամ պաշտպանական անձնակազմի թիւը, կարծես ինչ որ փոփոխութիւն կալ պօլտիկալ մէջ:

Մի յայտնի հարուստ և վաշխառու հրէա-Մեհրի անունովներն խեղդել է:

Մեր հովիւը շուտով կմեկնի ալ տեղից:

Գ. Վահան

ԼՈՒՐԵՐ

ԹԵՐԻՔ

Յարգաւորներ շատութեան պատճառով ձմարիտէի իսլամի պրովակացիան և վերադարձան գրուածքի մեր պատասխանը մնաց յաջորդին: Մենք սպասում ենք, որ առաջնորդարանը դուրս գայ վերջապէս կղերականութիւնը և հարկ եղած պատասխանատուութեան ենթարկել տայմը անօրէն ասող թերթին և յօգուածագրին:

Սերապիական Յուլիս 1-ից փոստի երթեկութիւնը կրկին ամենօրեայ:

Ք. 17-ից Գլխաւ մենք Չ. շահով աճանագրիք, Միտք՝ ի հատկապէս արժեքը, Միտք՝ ի պատճառով փոփոխակ 8 շահով՝ ծախուելու է հատը 6 շահով, Միտքը՝ հատկապէս ծախուել է Լալա՝ պ. Արտաշէս Տէր Օջանեանի, Մեհրիկով՝ մագաղանում և պ. Արեւի մօտ, իսկ Լիլուա՝ պ. Սիրապիական խանութում:

Սերապիական դպրոցի ակադեմիկոսներն Մայիս 25-ին, առաւօտեան, Ս. պատարագից յետոյ, Լազարեանին նուագելու է հրաժարական խումբը, ուսուցիչ:

պ. Վ. Յովսէփեանի ղեկավարութեամբ: Մեզ հաղորդում և ուրախութեամբ յայտնում ենք հասարակութեան, որ վերջապէս հաստատուած է քաղաքային վարչութիւնը (բալայիթ)՝ ինքնապատասխան կողմից՝ հայերից վարչութեան անդամ են նշանակուած պարոն Վարպետ Արեւի և պարոն Սմատ Մելիք Սարգսեան: Փաստաբաններ պ. Լ. Մելիք Աղաբեան և Ա. Տէր Յակոբեան նշանակուած են քաղաքային վարչ. խորհուրդի անդամներ:

Վարչութիւնը հոգալու է քաղաքի բարեկարգութեան, փողոցների մաքրութեան, լուսավորութեան, ուսուցիչաց մաքրութեան և սակագների վրայ:

Նասր-էն Սուլթանէ (բալայիթի նախագահ) ստորագրութեամբ՝ քաղաքային կենտրոնական վարչութեան կողմից թողած ազդը յայտնում է, որ բալայիթի հիմնարկման պատճառը քաղաքի մարտնչութիւնն ու ժողովրդական առողջապահութիւնն է, որովհետեւ ինքնապատասխան կողմից թիւն է դարձուելու բաղնիքների, սփռիչների, չլոփագների, քէլեփագների գործածած ջրերի և մորթուած մսերի խիստ մաքրութեան վրայ:

Խառն պահանջում է տեղացի և օտարական նոր բժշկներից իրենց աւարտման վկայականների ներկայացնելը: Արգելում է արթնանալի դեղատնայնութեան թիւն անելը:

Լսում ենք, թէ Յուսէփեանի միջոցով կայանալիք պատգամ ժողովը որ պէտք է լինէր թիւ. խորհրդի հաշիւները քննելու և վաւերացնելու: Ի բնիկ՝ որոշուելու առաջնորդարանի՝ համար, գումարուելու է մօտերս: Ինչ միտք ունի այլևս այս ուշացած ժողովը:

Այս նոր նշանակալ բալայիթի և պ. Մոլիսոօի մէջ ծանր ընդհարում է առաջ եկել: Առաջինը յայտարարելու իր ժիկացոց իրաւունքի ներքոյ կողակցիցը, աֆիօնը և ան ապիւն է անորդով: Պ. Մոլիսոօն, ի որ չի ձանաղում Նասր-էն Սուլթանին և թէհրանի կարգադրութեամբ՝ զրկում է պետական ունեւորից այն անձանց, որոնք անգամ են այդ նշանակալ բալայիթին:

Ամսիս 14-ին, Ն. Վ. Ռուսաց Նիկոլայ Բ. կայսեր թագադրութեան տարեդարձի առթիւ Բաղը Շամալում եղաւ մաղթանք և զօրահանգէս: Ներկայ է եղել մաղթանքին թիմիս առաջնորդը, Շ. Լազարեանի և երկու այլ քահանաների հետ: Ներկայ էին և գին. Նահ. Հովիթ Զօջա-էր-Գովէն, զօրահանգէսատար Սարգսար, Ռաշիդը քարկօպարը և այլն:

Ամսից 15-ին միս չէր մօրթուած որովհետեւ մասվաճառները չգիտէին իրարանցի մօրթուող անասնից վերջնուող մէկական դաւար ումը տալ: Մի կողմից պահանջում էր նորոհաստատ բարեկարգութեան կողմից՝ Բէթիկացոց վարչութիւնը: Այս երկուքն էլ էլ իրար յետեւից քնացել և կնքել են օղի կաթմաները, իւրաքանչիւրն իր կողմից իրեն իրաւատէր համարելով և միւսին չձանաղելով:

ՆՏՐՈՒՆԵԼՈՒՆ

Մեզ յայտնում են, որ Սալմաստի Գիլիգան գիւղի հայ եկեղեցին Ռուսադուան ասորիները, եպիսկոպոս Սերգէյի միջոցով, բռնի տիրել են, հակառակ այն բանին որ արձանագրութիւնները և բազմաթիւ գիրքովանութիւնները հայերէն են և եկեղեցին էլ հայկական: Առաջնորդը անձամբ գիւղի:

Մեզ համար սակայն խորթ և անհասկանալի է այն նշանակովի ակադեմիկոսները քաղաք վարչութիւնները լինում են ընտրութեամբ:

է պ. Ասլովին և հռահման բողոք յայտնելու:

ՊԱՐՈՒՆԵԼՈՒՆ

Ռաշտում բռն ժողովուրդի և առաւած թայֆայի՝ միջև տիրում է բուռն պայքար դպրոցի շուրջը և հոգաբարձական ընտրութեան առթիւ:

Մեծամասնութիւն կազմող ժողովուրդի առաջ թայֆայի հոգաբարձութիւնը փակել է Ս. Յորգանեանի դպրոցի սրահի դուռը, ժողովուրդը, սահմանած ժողով է գումարի Մարիամեան օրիորդաց դպրոցում: Խանգարելու նպատակով եկել այդ տեղ են թափուել թայֆայիները և չեն թողել որ բարեհամար, ժենեի համարաւորաւորակ հեղինակաւոր Իր. Աթաբէկեանը ընտրուի ժողովի նախագահ և առաջարկել են իրենց թիւնածու: Աստեան պետող քահանան գործը խաղաղութեամբ վերջացնելու համար, առաջարկել է պաշտի բուհարի թիւնը ընտրելու նախագահ: Այդ բանում իրենց պարտութիւնը նկատելով, իրաւունքի թիւնով, ծեծ ու բռնութեամբ թիւնով թայֆայիները յարձակում են որ թակեն իրեղ քահանային, հաղիւ նրան փրկում են միջանի ժողովուրդական երիտասարդներ: Քահանան վիրաւորուած, թողնում է ժողովը և հեռանում որով խափանուածներն թիւնը 80 հոգու կողմից բողոքի հետագիր է արուել Սպահան: Ահա այսպէս են ծառայում մարդիկ ժողովուրդին և շախատաւոր մասսային շահերին:

ԸՋՐՈՒՆ

Պօլսոյ պատրիարք Զաւէն արքեպիսկոպոսը հրաժարական է տուել, որովհետեւ մէքուսական ընտրութեան մէջ նորէն իրենց խօսքը դժուար և սղգի շահերը դաւաճանող Գաշնակցականները պատրիարքի ուղղամիտ գործունէութիւնը իրենց վնասակար համարելով ընտրութեան մէջ անուանարկիչ արշաւանք էին սկսել նրա դէմ, միս կողմից էլ ոմն երեսփոխան Սայապախան անարգական յօդուած էր տպել նոյն պատրիարքի հասցէին: Ազգային ժողովի վարչ. դատաւարան է Սայապախանին: Մերժում է պատրիարքի հրաժարականը:

ՈՐՏՈՒՆ

Իտալիոյ յարաբերութիւնները խիստ լարուած են Աւստրիոյ հետ: Անգլիան, Ֆրանսիան, Ռուսաստանը և Իտալիան աշխատում են կազմել մի միութիւն, որին ընդգրկել կազմում է Գերմանիոյ, Աւստրիոյ և Շուէտիոյ միութիւնը:

Տաճիկները, բացի Թալաթ-բէյի գլխաւորութեամբ Լիվոյի կայսեր մօտ զրկած պատուիրականութիւնից, մտադիր են մի նոր պատուիրականութիւն ևս զրկել Պետերբուրգ գինու օրական միտնար: Ենվէր փաշայի գլխաւորութեամբ, խիստ մասհոգուած են այս բանից Գերմանացիք:

ՊՕՍՏ-ԱՐԿՂ

Թաւրիզ. — պ. Ատովմեանին. — Ձեր տեղեկագիրը յաջողեց:

Ղազվիթ. — Պ. Ղահ. Թաւրիզեանին. — Ձեր 25 դաս բաժնեգէնը չնորհաւաճութեամբ ստացանք այստեղ պ. Ղ. Մ. Աղաջանեանից: Ձեզ անդորրագրի վաղուց ղեկել ենք տեղի դ. մեր գործակալ պ. Աբգ. Տէր Թաւրիզեանի միջոցով:

Խաւս. — պ. Իսր. Յարութեանին. — Ձեր ուղած անդորրագրերը և 3 նոր բաժանորդների անդորրագրերն էլ ղեկեցինք, խնդրում ենք դարձնել շուտ գանձել և փութով մեզ հասցնել:

Խաւս. — Պ. Ա. Ասատրեանին. — Ձեր նամակը ստացանք և կարգադրեցինք ըստ օր առաջի:

Թեհրան. — Պ. Մ. Փափագեանին. — Մայիս 10-ին ղեկեցինք Ձեզ տեղի դ. բաժանորդների անդորրագրերը, խնդրում ենք բոլոր առաջ, բարի լինել, գանձել դարձնել և անգամ հեռագրով մեզ հասցնել: Դրամի խիստ կարիք ունենք:

Ապահան. — պ. Ն. Գալթեանին. — Ձեր անգլիական բանկի միջոցով հեռագրով մեզ փոխադրած 40 թումանի բաժնեգէնը ստացանք չնորհաւաճութեամբ:

Ղազվիթ. — պ. Մ. Թաւրիզեանին. — Ձեր հերթումը յաջողեց:

Վան. — պ. Կայծունեան: Յաջող է. կտալու: Չարունակեցէք ալ թղթակցութիւններ:

Խմբագիր-Հրատարակիչ

Ար. Տէր-Վարդանեան

ՎԵՐԶԻՆ ՊԱՅՈՒՆ

Մայիս 16-ին, ժամը 11-ին գինեկայ կօնսուլ պ. Ասլովի հրամանով, մինչև ջր. նոր կարգադրութիւն, փակուեց «Փարոս» տպարանը այն պատճառով, որ հակառակ հէնց իւր պ. կօնսուլի հրամանի տպարանաւոր իր տպիւրք աֆիշաները և ազդերը չեն ներկայացրել նախապէս քաղաքական Սարգար Սօքարափին:

ՌՈՒՄԵԼԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

„ԱՆՕՆԻՄ“

ՍՊԻՐՏԻ ԵՒ ԿՕՆԵԱԿԻ

ԶՏԻԶ ԳՈՐԾԱՐԱՆ

ԵՒ

ԼԵԿԵՕՐԵՐԻ, ԽԵՂՈՂԻ ՌԻ ՍԵՂՆԵՐԻ ԳԻՆԵՆԵՐԻ, ՍՊԻՐՏԻ ԵՒ ՆԱՏՈՒՐԱԼ ԿՕՆԵԱԿՆԵՐԻ

ՍԿԼԱԴԵՐ

ՌՈՒՄԻԱ

Տեղեկութիւնների համար գիմի

ԵՂԱՍՐՔ ԲՈՒԴԱՂԵԱՆԵՐԻ

կանտորը

3 — 1